ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ՀԱՅՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ

Օգոստոսի դարաշրջանից սկսած Հռոմեական կայսրության արտաքին քաղաքականությունը ենթարկվեց զգալի փոփոխությունների, որոնք երիտասարդ կայսրության սահմանների անկայունության և սեփական ռազմական միջոցների անբավարար չափի անխուսափելի հետևանքներն էին։ Դրանց թելադրանքով էլ կյանքի կոչվեցին Օգոստոսի վարչական ու ռազմական ռեֆորմները, որոնց հետևեցին նաև այլ միջոցառումներ և հիմնականում իրականացվեցին հաջորդ կայսերական հարստությունների օրոք։ Այդ ներքին քաղաքական միջոցառումների մի մասի պատճառը Արևելքում և հատկապես Հայաստանում ծայր առած բուռն իրադարձություններն էին, իսկ փոխհարաբերություններն այս վերջինի հետ կարևոր տեղ էին զբաղեցնում Հռոմի արևելյան քաղաքականության համակարգում։ Հռոմի կողմից հայկական հողերն իր տիրույթները դարձնելու փորձերը մեծ մասամբ ձախողվում էին, երբեմն-երբեմն միայն հասցնելով կարճատև հաջողության։ Պատմության ընթացքն արագացնում էր Փոքր և Մեծ Հայքերի միջև աննկատելիորեն երևան եկած սահմանագծի վերջնական ձևավորման խնդիրը։ Հռոմի արևելյան սահմանների անկայունությունից բխող առաջին հուզումներն իրենց զգալ տվին մ. թ. ա. 51 թ., երբ պարթև թագաժառանգ Բակուրի բանակը հայ զորավար Վասակի առաջնորդությամբ ներխուժեց Ասորիք (Cass. Dio., L, 28,1)։ Միաժամանակ լուրեր տարածվեցին, թե իբր, հայոց զորքը մոտենում է Կապադովկիային։ Ստեղծված իրավիճակը Հռոմի համար ծայրաստիճան տհաճ էր. մայր երկրում քաղաքացիական հրվիներ էին, իսկ Ասորիքը հազիվ ի վիճակի էր ապահովելու իր պաշտպանությունը[1]։ Անպաշտպան մնացած Կապադովկիան ստիպված էր օգնություն աղերսել Կիլիկիայի պրոկոնսուլ Ցիցերոնից, բայց վերջինս էլ իր տրամադրության տակ ուներ ընդամենը մի քանի կոհորտ։

Հռոմի համար տագնապալի այդ օրերին անդրադառնալիս Ցիցերոնը վկայում էր, որ ինքն արշավեց Կիլիկիային հարևան Կապադովկիայի հողերը և ամրացավ «Տավրոսի ստորոտում գտնվող Կիբիստրա քաղաքից քիչ ներքև, որպեսզի հայոց արքա Արտավազդը՝ ինչ մտադրություններ էլ ունենար (ի վերջո) իմանար, որ հռոմեական ժողովրդի զորքը գտնվում է նրա սահմաններից ոչ հեռու»[2]։

Հռոմի արևելյան սահմանների թուլությունը ի հայտ եկավ նաև մ. թ. առաջին դարի փոթորկահույզ իրադարձությունների ժամանակ, որոնք դգալի հարված հասցրեցին կայսրության հեղինակությանն ու քաղաքական վարկին Արևելքի ժողովուրդների աչքում։

Դեռ այդ տարիներին Հռոմի ռազմական ու քաղաքական որոշ գործիչներ, մասնավորապես՝ Կորբուլոնը, քննադատաբար էին տրամադրված հռոմեա-հայկական սահմանում իշխող իրավիճակի նկատմամբ (Tac., Ann., XIII, 35; XIV, 26; XV, 6)։ *Ամեն անգամ, կրիտիկական պահերին, Ասորիքից այստեղ էին փոխադրվում զորամիավորումներ։ Միևնույն ժամանակ, նկատելի էր նաև*

---

[1] *Հրանդ Ք. Արմեն. Անկում Արտաշեսյան հարստության. Պեյրութ, 1967, էջ 65։*

[2] *Տե՛ս* Письма Марка Туллия Цицерона к Аттику, близким, брату Квинту, М. Бруту. Перевод и комментарии В. О. Горенштейна. Т. II, годы 51—46. М.—Л., 1950, с. 27. (Cic., Fam., 15,2). *Տե՛ս նաև՝ Ք. Արմեն, նշվ. աշխ., էջ 66։*

Հռոմեական կայսրության տրամադրության տակ գտնվող հաղորդակցության ուղիների ու ճանապարհների ոչ բարվոք վիճակը Կապադովկիայում ու Փոքր Հայքում։ Աստիճանաբար այս բացթողումները Հռոմը լրացրեց։ Դեռ Կորբուլոնի ժամանակ Փոքր Հայք տեղափոխված երկու լեգեոնները՝ XII-ը և XV-ը, մնացին այնտեղ մինչև կայսրության վախճանը, իսկ Փոքր Հայքի տարածքն սկսեց ծածկվել ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող և պաշտպանական բնույթի կառույցներով։ Դրանց շնորհիվ Փոքր Հայքը զգալի քայլ կատարեց դեպի առաջ ինչպես քաղաքական ու ռազմական, այնպես էլ տնտեսական առումներով։ Եփրատ գետի աջ ափը, հուսալիորեն ամրապնդման շնորհիվ, վերածվեց Հռոմի սահմանների երկայնքով ձգվող երբեմնի ուժեղ լիմեսներից[3] մեկի՝ հարելով Տրապիզոնի մոտ սկսվող Պոնտական և Կոմմագենեի մոտ սկիզբ առնող Ասորիքի լիմեսներին։

Եփրատի արևմտյան ափին հռոմեացիների կողմից երբևիցե կատարված ամենանշանակալից գործերից մեկը 72 թ., Վեսպասիանոսի օրոք, հայկական Մելիտենե քաղաքի զավթումն էր, որ ապահովեց Եփրատի ավազանի զգալի հատվածի հսկողությունը[4]։ Սկսած այս պահից՝ Սատաղից Մելիտենե ընկած ողջ սահմանագիծը գտնվում էր հռոմեացիների հսկողության տակ։ Հավանաբար, հենց այս ժամանակվանից էլ սկսվում են ուրվագծվել վերին Եփրատի ափին ձգվող լիմեսի հիմնական բաղադրամասերը։

Վերինեփրատյան և նրան հարևանող լիմեսների ստեղծման ուղղությամբ առաջին քայլերը կատարվել են արդեն Ներոնի դարաշրջանում, երբ Կորբուլոնի ջանքերով ամրապնդվեց Ասորիքը, իսկ Պոնտական ծովափը շրջափակվեց հսկիչ պահակակետերով (Tac., Ann. XV, 9; Jos. Flav., Bell Jud., II, 16, 4)։ Այս գործի շարունակողն եղավ Վեսպասիանոսը, որը Հայաստանը չորս կողմից շրջապատեց կայազորներով (Tac., Hist., II, 6)։ Ուսումնասիրողների մի զգալի մաս (այդ թվում նաև Կյումոն եղբայրները) հակված է հայկական սահմանի վրա չտեսնել նման լիմեսի առկայությունը, պատճառաբանելով, թե նախ՝ Եփրատն ու նրա ափերի երկայնքով ձգվող լեռներն արդեն բնական լիմեսներ էին, և հետո՝ Հայաստանը միշտ էլ պրոհռոմեական երկիր էր, յուրօրինակ բուֆեր՝ Հռոմի ու Պարթևների միջև, ուստի և անհրաժեշտություն չկար նրանից պաշտպանվելու[5]։ Այս պնդումներից առաջինին մենք դեռ կվերադառնանք, իսկ ինչ վերաբերում է երկրորդին, ապա այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ դարեր շարունակ Հռոմը ջանում էր իրեն միացնել այդ «պրոհռոմեական» երկիրը, սակայն համառ դիմադրության էր հանդիպում ինչպես Հայաստանի, այնպես էլ նրա դաշնակից տերության՝ Պարթևների կողմից։ Իրավիճակը փոխվեց Իրանում 226 թ. տեղի ունեցած դինաստիական հեղաշրջումից հետո միայն, իսկ ավելի վաղ հայ-հռոմեական սահմանը հռոմեացիների կողմից վեր էր ածվել լիմեսի։ III—IV դդ. արդեն հռոմեացիները պետք է լուծեին նոր խնդիր՝ կառուցել մի երկրորդ, հռոմեա-պարսկական լիմես, որի անհրաժեշտությունն առաջ էր եկել հատկապես IV դարում տեղի ունեցած Հայաստանի բաժանումից հետո։

Առաջարկած խնդրի ուսումնասիրությունը դժվարանում է նրանով, որ այդ լիմեսը գրեթե չի ենթարկվել հնագիտական ուսումնասիրության։ Բայց անգամ այս վիճակում, դեռ XIX դարի կեսերին, տվյալ ամրությունների համակարգի՝ լիմեսի մերձակայքում հայտնաբերվում են մղոնաքարեր, արձա-

---

3 Լիմեսը (limes) սկսած մ. թ. I դարից Հռոմի սահմաններին կառուցվող պահակակետերի, ամրոցների, լեգեոներական ճամբարների, քաղաքների, առևտրական կետերի, ակվեդուկների բարդ համակարգ էր։

4 M. P. Charlesworth. Trade-Rotes and Commerce of the Roman Empire. Second edition. New York, 1970, p. 81.

5 Ուղևորություն հնախոսական հետաղոտության ի Պոնտոս և ի Փոքր Հայս Փր. և Եվգ. Կյումոն եղբարց.—Պոնտական Ուսումնասիրություն, մասն Բ, թարգմանեց Հակովբոս Տաշյան. Վիեննա, 1919, էջ 346։

նագրություններ և, նույնիսկ, մոռացված ուղիներ (տե՛ս ստորև)։ Ուստի մեր տրամադրության տակ գտնվող հնագիտական՝ հիմնականում հողի երեսին երևան եկած նյութերը, որքան էլ սակավաթիվ, այնուամենայնիվ խոսուն են, և մենք ստորև ի շարս այլ կարգի նյութերի, կօգտվենք նաև դրանց ընձեռած հնարավորություններից։

Գլխավոր՝ Սատալա-Մելիտենա (Սատաղ-Մելիտենե) ուղու, ինչպես և սրանից ճյուղավորվող ճանապարհների վրա ստեղծված իրավիճակը ղգալի չափով արտացոլված է հռոմեական զույգ ճանապարհացույցներում՝ Անտոնինոս Օգոստոսի քարտեզի և Պևտինգերյան տախտակի (կամ ուղղակի՝ Կաստորիուսի քարտեզի) մեջ[6]։ Փոքր Հայքի՝ այս քարտեզներից արդեն հայտնի ճանապարհներն ապացույցն են այն բանի, որ ինչպես երկրի ներսում, այնպես էլ յուր սահմանների երկայնքով՝ Փոքր Հայքն ուներ հաղորդակցության կարևորագույն ուղիներ։ Փոքր Հայքի արևմտյան մասերից դեպի Եփրատի ափերն ու Սատաղ ձգվող ճանապարհները տարբեր առիթներով բավականաչափ լավ ուսումնասիրված են Կյումոն եղբայրների, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի կողմից։ Եվ նրանց հետազոտությունների շնորհիվ ճշգրտված ճանապարհների պատկերը[7] կարող են փոխել միմիայն հնագիտական ուսումնասիրությունները, ինչպես ժամանակին կոահել է և ինքը՝ Ն. Ադոնցը[8], ձեռքի տակ ունենալով միայն տեղագրական նկարագրություններ, աշխարհագրական քարտեզներ և մատենագրական վկայություններ։ Ավելի անորոշ վիճակում է Մելիտենից դեպի հյուսիս՝ իր հին անվանումը այժմ էլ պահպանած Զիմառա (Զմմառ) բնակավայրն ընթացող ուղու խնդիրը։

Փոքր Հայքում Պոմպեոսի հիմնադրած Նիկոպոլիս քաղաքից դեպի Սատալա-Սատաղ էին տանում երկու ճանապարհ։ Նրանցից մեկը հարում էր Գայ գետին, իսկ մյուսը ձգվում էր փոքր ինչ հարավից՝ Զիմենի լեռների հարավային ստորոտներով։ Հին Նիկոպոլիսի ավերակները գտնվում են Նախկին հայկական Բուրգ գյուղի մոտ՝ Սուշեհրի-էնդերեսից մեկ մղոն գեպի հր-արլ.[9]։ Մենք առանձին-առանձին չենք անդրադառնա Նիկոպոլիս-Սատալա ուղու ամեն մի հանգրվանի (դրանք տեղադրված են քարտեզի վրա), սակայն նրանցից մի քանիսը հատուկ ուշադրության առարկա կդառնան այնտեղ անցյալում հայտնաբերված, անտիկ ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական նյութերի լապակցությամբ։

Նիկոպոլիսից դեպի արևելք ուղղված առաջին կայանը Օլոտոեդարիղան էր. այն գտնվում էր ներկայիս Աղվանիս գյուղի տեղում։ Այստեղ, դարասկզբին, Կյումոն եղբայրները հայտնաբերել են Վալենտիանոսի, Վալենտիոսի և Գրացիանոսի անունները կրող մի մղոնաքար, սակայն, ցավոք, նրա վրա չկար հեռավորության մասին որևէ նշում[10]։ Նիկոպոլիսից դեպի Սատալա տանող հարավային ուղու վրա շատ կարևոր դիրք էր գրավում Կարսատը կամ Դարսագիսը, որը նույնացվում է ներկայիս Գերջանիսի (Ռեֆահիե) հետ։ Կարսատից դեպի Եփրատի ափ ճանապարհն անցնում էր Անտիտավրոսի հզոր զանգվածի լեռանցքներից մեկում կառուցված Անալիբա հանգրվանի մոտով։ Գերջանիսից ոչ շատ հեռու, ներկայիս Զաբտի գյուղի հունական եկեղեցում Կյումոն եղբայրները հայտնաբերել են Դոմիցիանոսի ժամանակաշրջանի մի մղոնաքար, որի վրա կար ավելի ուշ արված արձանագրություն՝ Հադրիանոսի պատվին

---

[6] K. Miller. Die Weltkarte des Castorius. Ravensburg, 1888, S. 60, 64; Itineraria Romana. Römische Reiswege an der Hand der Tabula Peutingeriana Dargestellt von Konrad Miller. Stuttgart, 1916, S. 265—267.

[7] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя.—Тексты и разыскания по армяно-грузинской филологии. Кн. XI. С.-Петербург, 1908, с. 76—84; Փր. և Եվգ. Կյումոն. Նշվ. աշխ., էջ 331։

[8] Н. Адонц. Указ. соч., с. 75.

[9] Փր. և Եվգ. Կյումոն. Նշվ. աշխ., էջ 320—327։

[10] Նույն տեղում, էջ 330։

հյուսված մի ձոն։ Հնագույն շերտի գրերից հստակ երևում էր միայն հռոմեական 45 թվանշանը, իսկ, ինչպես պարզված է, Կարսատ-Նիկոպոլիս (Բուրգ) ուղու երկարությունը հենց 45 մղոն էր (67 կմ)[11]։ 5 կմ Կարսատից արլ., այժմյան Մելիք-Շարիֆ բնակավայրի մոտ, դեպի Երզնկա տանող ճանապարհի վրա, հայտնաբերվել է լատինական արձանագրության մի բեկոր (որը փոխադրել էին տեղի հայկական եկեղեցի). այստեղ փառաբանվում էր Սեպտիմոս Սևերոսը, նա իր պարթևական արշավանքից հետո տեղի հռոմեական քաղաքացիներին հանդիսացրել էր մի հեծյալ կոհորտ[12]։ Բայց, անկասկած, ավելի արժեքավոր է դարձյալ նույն վայրում գտնված (XIX դարում երկու կես արված), Վեսպասիանոսի ժամանակաշրջանին վերաբերող մղոնաքարը (մ. թ. 76 թ.)։ Դա առ այսօր Փոքր Հայքում հայտնաբերած հնագույն մղոնաքարն է[13]։ Սրանք են դեպի Սատաղ ու Եփրատ տանող ճանապարհներին գտնված և հռոմեական ժամանակներին վերաբերող մղոնաքարերը։

Նիկոպոլիս-Սատալա գծից մի քանի ճանապարհներ իջնում էին դեպի հարավ, դեպի հռոմեական կարևորագույն զորակայանը՝ Մելիտենա։ Այս ճանապարհների վրա գտնվող կարևորագույն հանգուցակետերից էին նաև արդեն հիշված Կարսատը (Գերջանիս) և վերջինից 30 կմ դեպի արլ. ընկած Արավրակոսը։ Վերջինիս դիրքը չափազանց հաջող էր ընտրված. այն տեղադրված էր խաչաձև լեռնանցքի կենտրոնում, որով անցնում էին Անի-Կամախից դեպի Նիկոպոլիս ու Սատաղ և Կարսատից Երզնկա տանող ուղիները։ Կարսատից ու Արավրակոսից ուղիները հովհարի պես բացվում էին դեպի Եփրատի վրա ընկած 3 կետերը՝ Անալիբա, Անի-Կամախ և Երզնկա, որոնք միմյանցից դտնվում էին հավասար հեռավորության վրա (40-ական կմ)։

Եթե Նիկոպոլիսից դեպի Սատաղ ու Եփրատի վերին հոսանքի կետերը ձգվող ուղիների նույնացումը ժամանակակից աշխարհագրական վայրերի հետ բավական համոզիչ է, ապա Անալիբա-Թեուսիլա-Զիմառա արևելից հարավ, դեպի Մելիտենա տանող ճանապարհները կարիք ունեն տեղում կատարվելիք ճշտումների։ Զիմառայից դեպի Մելիտենա ձգվող ուղու մասին մեզ վերստին տեղեկություններ են տալիս Անտոնինոսի և Կաստորիուսի քարտեզները[14]։ Ըստ Ն. Ադոնցի, որը կատարել է այս ուղու կետերի քննությունը, վերջիններից Թեուսիլան կարելի է տեղադրել Դիվրիգի, Սաբան՝ Շեպիկի մոտ (Արաբկիրից հս.), Դասկուզան՝ Աղինի մերձակայքում, Անգու գետի վրա գտված բյուզանդական կամրջի մոտ, Հիսպան՝ Սերաջիկի, Արանդասը՝ Արգուվանի, իսկ Կրական՝ Ջերմուկի մոտ։ Թեև սույնը առ այսօր կատարված ամենահաջող փորձն է, սակայն ավելորդ չենք համարում որոշ դատողություններ անել այդ տարածքի մի քանի կետերի տեղադրման վերաբերյալ։

Բանն այն է, որ վերոհիշյալ զույգ ճանապարհացույցների վրա եղած անունների բաղդատման միջոցով կարելի է առաջարկել Մելիտենա-Զիմառա ուղու վերականգնման 6 հավասարազոր տարբերակներ։ Դրանցից երկուսը ստացվում են Անտոնինոսի, իսկ չորսը՝ Կաստորիուսի քարտեզների վերլուծությունից։ Զիմառա-Մելիտենա ուղու ընդհանուր երկարությունը, համաձայն Անտոնինոսի քարտեզի, 108 հռոմ. մղոն է (170 կմ), իսկ ըստ Պևտինգերյան տախտակի՝ 120 հռոմ. մղոն (200 կմ), թեև, ըստ Ն. Ադոնցի, երկու ճանապարհացույցներում էլ արտացոլվում է միևնույն ուղին[15]։ Եփրատի ափի երկարությունը Զիմառայից մինչև Մելիտենա ավելի քան 230 կմ է։ Հենվելով Պևտինգերյան տախտակի տվյալների վրա, կարելի է ենթադրել, որ ճանապարհը անցնում էր միայն գետի ափի երկայնքով։ Բայց այդ դեպքում, ճանա-

---

11 Նույն տեղում, էջ 337։

12 Նույն տեղում, էջ 340։

13 Նույն տեղում, էջ 340—341։

14 K. Miller. Die Weltkarte des Castorius, S. 64; Itineraria Romana. Römische Reiswege an der Hand der Tabula Peutingeriana..., S. 265.

15 Н. Адонц. Указ. соч., с. 80.

պարհի վերջին հատվածը, Կրակայից մինչև Մելիտենա, ստացվում է ոչ թե 18 կամ, թեկուզ, 28 հռոմ. մղոն, այլ 45 կամ 40 մղոն (համապատասխանաբար 72 և 63 կմ)։ Հաջորդ բոլոր չորս տարբերակներն էլ թելադրում են, որ ճանապարհը կարող էր անցնել միայն մոտակա լեռնազանգվածի միջով՝ գրեթե ուղիղ գծով հյուսիսից հարավ, որը հավասար է 170—180 կմ։ Այս եզրակացությանն է հանգեցնում նաև հետևյալ իրողությունը. 1866 թ. Սարիչիչեկի լեռներում հայտնաբերվել է հռոմեական դարաշրջանի մի մոռացված ճանապարհ, որ ձգվում էր Դիվրիգից դեպի Արաբկիր[16]։ Եթե փորձենք հենվել ճանապարհացույցներից մակաբերվող 4 տարբերակների վրա՝ ընդդեմ մնացած երկուսի, ապա ստացվում է, որ Մելիտենա-Զիմառա ճանապարհը լեռնային էր և Եփրատի ափի զգալի մասը՝ 170 կմ, չուներ պաշտպանական միջոցներ։ Հռոմի արևմտյան սահմանների վրա վեր խոյացող լիմեսներում նման իրավիճակի չես հանդիպի. Վերին Դանուբի վրա, միայն մի հատվածում, Լավրիցիումից մինչև Ինն գետը (ներկայիս Լինցից մինչև Ֆիլսհոֆեն) մոտ 75 կմ տարածության վրա չկան ամրություններ, իսկ ստորին Դանուբի վրա՝ դարձյալ մի հատվածում, Պատիարիա ամրոցից (Արչար) մինչև Վիտ գետի ձախ ափը, այսինքն 150 կմ միջակայքում։ Մնացած բոլոր սահմանային վայրերում հռոմեական ամրությունները միմյանցից հեռու են առավելագույնը 40—50 կամ միջին հաշվով՝ 35 կմ[17]։ Այսուհանդերձ, անկախ նրանից, թե մեր երկու հռոմեական ճանապարհացույցներում նշված ուղիները լեռներով էին անցնում, թե գետափնյա վայրերով, մի կողմից՝ վերևում հիշված և հռոմեական ժամանակին վերաբերող ճանապարհի գյուտի և, մյուս կողմից՝ Եփրատի ափին վերջերս հայտնաբերած ամրոցների շնորհիվ պարզվում է, որ ինչպես գետի ափը, այնպես էլ նրան զուգահեռ ձգվող լեռնազանգվածը պաշտպանվում էին մի խումբ ամրոցներով, որոնք կազմում էին պաշտպանական ամրությունների երկու, միմյանց զուգահեռ շարքեր։ Նորահայտ գետափնյա երեք ամրոցները տեղադրված են Աղինի շրջանում[18], ուր, ըստ Ն. Ադոնցի, հարկ էր փնտրել Դասկուզա ամրոցը[19]։ Հեռավորությունն այս ամրոցներից մինչև հյուսիսի ամենամոտիկ ամրությունը 40 կմ է, իսկ դեպի հարավ կառուցված ամրությունները՝ Արածանու և Եփրատի միախառնման վայրում, 30 կմ։ Հետևաբար, Հայաստանի սահմանագլխին ևս, ինչպես հռոմեական մյուս գետային լիմեսներում, ճշտորեն պահպանվում էր թույլատրելի հեռավորությունը ամրոցների միջև։ Մյուս կողմից՝ դժվար չէ նկատել, որ ինչպես Նիկոպոլիս-Սատալա, այնպես էլ Զիմառա-Մելիտենա կետերը միմյանց հետ կապված էին Գայլ և Եփրատ գետերի երկայնքով ձգվող ու նրանց զուգահեռ կլորկնակի ճանապարհներով։ Բացի այդ՝ Կարսատի և Արավրակոսի շրջանից դեպի Եփրատ էին իջնում երեք, գրեթե զուգահեռ, ճանապարհներ։ Ուշագրավ է, որ 1966 թ. անգլիացի հնագետ Թ. Բ. Միթֆորդը հնագիտական ուղևորության ժամանակ հայտնաբերել է հին ճանապարհների հետքեր Եփրատից 50 կմ դեպի արմ., որոնք ձգվում էին Անտիտավրոսից դեպի Քեմալիե (Ակն)։ Սրանցից մեկն ուներ 7,90 մ լայնություն, հիանալի պահպանված եզրաքարեր և սալա-

---

16 Նույն տեղում։

17 G. Webster. The Roman imperial army of the first and second centuries A. D. London, 1969, p. 5.

18 R. P. Harper. Pagnik Öreni Excavations, 1969 (Plates 62—72). In: Keban Project 1969 Activities.—Middle East Technical University Keban Project Publications. Series I (այսուհետև՝ Keban), № 2. Ankara, 1971, p. 95—98; Pagnik Öreni Excavations, 1970 (Plates 81—94).—Keban, № 3, Ankara, 1972, p. 123—125; Pagnik Oreni Excavations, 1971 (Plates 85—96).—Keban, № 4, Ankara, 1974, p. 107—108; Ü. Serdaroglu. Agin and Kalaycik Excavations, 1970 (Plates 11—31).—Keben, № 3, Ankara, 1972, p. 25—43; Agin and Kalaycik Excavations, 1971 (Plates 31—45).—Keban, № 4, Ankara, 1974, p. 19—24; Researches in Agin and Its Vicinity, 1972 (Plate 19).—Keban, № 5, Ankara, 1976, p. 11—12.

19 Н. Адонц. Указ. соч., с. 81.

հատակի կենտրոնական շարքը։ Ճանապարհի ամենաբարձր կետում, 5 կմ երկարությամբ լեռնագոգի մեջ, խառնիխուռն թափված էին պահակակետի խորանարդաձև քարերը։ Այս ճանապարհի գոյությունը հաստատող միակ գրավոր վկան Կարաբուդաղում Հոգարտի կողմից գտած՝ Դեցիուսի արձանագրության հիանալի պահպանված պատճենն է[20]։

Մեծ Հայքի սահմանագլխի հռոմեական լիմեսը ինչպես արտաքին տեսքով ու կառուցվածքով, այնպես էլ ներքին բաժանումների տիպաբանությամբ տարբերություն համակարգ էր և սերտ աղերսներ ուներ հռոմեական մյուս լիմեսների հետ։ Օրինակ՝ ղրանցից մեկի՝ Մեծ աֆրիկյան լիմեսի արևմտյան հատվածը կարելի է տրոհել երեք թևերի՝ մավրիտանական, նումիդական ու տրիպոլիտանական, որոնք պաշտպանում էին մոտ 1200 կմ երկարությամբ սահմանը[21]։ Այս համակարգի երեք բաղադրիչները միմյանցից տիպաբանորեն բավականաչափ տարբեր են։ Արևմտյան մասը կամ մավրիտանական լիմեսը բաղկացած էր մեծ մասամբ հավասարաչափ հեռավորության (միջին հաշվով՝ 35 կմ) վրա ընկած ամրություններից։ Սրա գրեթե կրկնությունն էր տրիպոլիտանական լիմեսը։ Այս երկուսի միջև ընկած նումիդական լիմեսը պաշտպանված էր աղի ծովերով (խոտերով) և վերջիններիս ետևում կառուցված ամրոցները միմյանցից հեռու էին միջին հաշվով 20 կմ։

Պաշտպանական նպատակներով բնական միջոցների օգտագործման նույն սկզբունքը մենք տեսնում ենք նաև Դակիայում։ Լիմես Պորոլիզենսիսն, օրինակ, գտնվում էր Արևելյան Կարպատների կազմած աղեղի կենտրոնում[22]։ Այստեղ էլ ամրոցների շղթան պաշտպանում էր Մուրեշ և Օլտ գետերի ողջ ավազանը, իսկ լիմեսի կենտրոնում գտնվող Ապուլում հզոր ամրոցը հարևան երկու ամրոցներից հեռացած էր 85-ական կմ ձգվող կիրճերով։ Ուշագրավ է նաև Դանուբի ստորին հոսանքի, Կարպատյան լեռների արևելյան փեշերի և Սև ծովի միջև գոյացած միջանցքը, որը փակված էր ամրոցներով. ընդ որում՝ ինչպես Փոքր Հայքում, այնպես էլ այստեղ, ամրոցները կառուցված էին միմյանց զուգահեռ երկու շարքերով[23]։

Այս ամենը կրկին ու կրկին համոզում են, թե որպիսի ընդհանրություններ կային բնական պայմաններով ու տեղագրությամբ միմյանց չնմանվող վայրերում հռոմեացիների կառուցած լիմեսների հորինման սկզբունքների միջև։ Այս հանգամանքի վրա ուշադրություն են դարձրել Կյումոն եղբայրները։ «Հավանական է,—գրում են նրանք,—որ շատացան այս երկրիս մեջ (հռոմեացիները—Հ. Հ.) հաստատելով բերդակներու շարք մը, որոնք լերանց անցքերուն կհսկեին, ինչպէս որ Արաբիոյ մեջ անապատի եզերքին վրա աստիճանաբար զետեղվեցան պահակերոցներ։ Այս երկու իրարմե այնպես տարբեր աշխարհներուս մէջ ալ պաշտպանողական անհրաժեշտ պետքերը միևնույն էին. ընդարձակ անապատներն՝ ինչպես նաև բարձրաբերձ լեռնաշղթաները բանակ մը չի կրնար անցնիլ՝ առանց անհրաժեշտորեն կապված ըլլալու որոշ ուղեգծերու. և այն արահետներն՝ որ ջրավայր-կետերն իրարու կկապեն, կնմանին կապաններուն»[24]։ Հենց այսպիսի լեռնանցքներ-կապաններ էլ կան Հայաստանում՝ Եփրատի ավազանում։ Նրանցից մեկը գտնվում էր Թեոդոսուպոլսից (Կարին) դեպի Կոպի լեռնանցք տանող ճանապարհին և համապատասխանում է այժմյան Բռնակապանին։ Մյուսը գտնվում էր Եփրատի ափին, Ծոփքի քաղաքներից դեպի Եփրատի աջ ափը տանող ճանապարհի վրա. այս վայրի անվանումը՝ Քեբան, հայերեն կապան բառի աղավաղված ձևն է։

---

[20] T. B. Mitford. Survey of the Euphrates Limes.—Anatolian Studies, 1967, vol. XVII, p. 13—14.

[21] G. Webster. Op. cit., fig. 10.

[22] Նույն տեղում, նկ. 5։

[23] Նույն տեղում։

[24] Փր. և Եվգ. Կյումոն. նշվ. աշխ., էջ 347։

Վերին Եփրատի լիմեսում, հին լատինացված տեղանունների կողքին, կային նաև այնպիսիք, որոնք պահպանել են իրենց հայկական անվանումները. օրինակ, Կապան, Անի-Կամախ, Սատաղ։ Դա բնական է, որովհետև այս երկրամասում հռոմեացիների հայտնվելուց դեռ շատ առաջ Եփրատի ափին գտնվում էին ամրոցներ, որոնք հետագայում մտան հռոմեական լիմեսի կազմի մեջ։ Անհավանական չէ, որ դրանց շարքում էին նաև Փոքր Հայքում Միհրդատ Եվպատորի կառուցած 75 ամրոցները (Strabo, 12, 3, 28)։ Վերին Եփրատի լիմեսը գետի հանդիպակաց ափին ուներ ոչ պակաս ահեղ մրցակից։ Գետի շատ մասերում, ինչպես վաղ հելլենիստական, այնպես էլ հռոմեական դարաշրջանում, միմյանց դեմ-դիմաց, այս ու այն ափերին կառուցված էին ամրոցներ։ Հատկապես ուժեղ մրցակցություն կար Մելիտենայի ու Տոմիսայի (Իզոլու) միջև. ընդ որում՝ մ. թ. ա. II դարում Ծոփքը Տոմիսան գնեց Կապադովկիայից[27], իսկ սրա դիմաց ընկած Մելիտենան, մինչև Վեսպասիանոսի նվաճումը, պատկանում էր Մեծ Հայքին[26]։ Քեբանի դիմաց, գետի աջ ափին, ելնելով այդ գայրի կարևոր ստրատեգիական դիրքից, անկասկած պետք է լիներ (գոնե հռոմեական ժամանակ) ինչ-որ ամրություն։ Եվ հիրավի, երեք նորահայտ հռոմեական ամրոցների դիմաց (Քիլիսի-Յազիզի, Կալաչիքլեր, Պաղնիք-Յորնի), գետի հանդիպակաց ձախ ափին այժմ մասամբ պեղված է Կաւայչիկ ամրոցը։ Դրա օգտին է խոսում նաև այն, որ Եփրատի երկու ափերին էին գտնվում Անին ու Կամախը։

Ինչպես հռոմեական պաշտպանական մյուս համակարգերում, այնպես էլ վերինեփրատյան լիմեսում, խոշոր քաղաքներն ու ամրոցները հարևանում էին փոքր ամրոցներին ու պահակակետերին։ Ցավոք, այս վերջինների մասին մեզ հասած տեղեկությունները աղքատ են։ Եփրատի հռոմեական ափին ընկած քիչ թե շատ լավ պահպանված ամենահարավային պահակակետը գտնվում է Դիվրիգից ոչ շատ հեռու, Ուրմիա վայրում։ Այս փոքրիկ պահակակետն, ըստ Ն. Ադոնցի՝ հասնում է մինչև բյուզանդական կամ հռոմեական ժամանակաշրջան[27]։ Մյուս պահակակետերը հանդիպում են Ուրմիայից հյուսիս և Երզընկայից դեպի հս-արմ., Արավրակոս տանող ճանապարհին։ Զարդակլուի կիրճում Կյումոն եղբայրները ներկա դարասկզբին հայտնաբերել են երկու միանման ամրություններ, որոնցից կուզեինք ուշադրություն հրավիրել երկրորդի վրա, որն ընկած էր Երզնկայից ավելի հեռու, քան առաջինը. «Պատերը շինված են կանոնավոր կոփված վիմաքարերով և իրարու զոդված շաղափով մը՝ որ կազմված էր կրե ու մանրախճե. և մեկ մետրե ավելի թանձրություն ունեին։ Որմերուն մեկ մասը կանգուն կեցած էր դեպ ի հարավակողմը. և հիմերու գծով՝ առանց դժվարության ընդհանուր հատակագիծը կճանչցվեր։ Հիմերը ուղղանկյուն մը կգծեին՝ իբր հիսուն մետր երկայնությամբ և իբր քսան մետր լայնությամբ. և հարավ-արևելյան անկյունը կզանազանվեին արտակարգաո բոլորաձև մարտկոցի մը հետքերը. Բլրույն ամբողջ վերնամասը գրված էր ուրիշ շինվածոց մնացորդներով, որոնք շրջափակ պարսպով մը շրջապատված էին. և յուր կողերը ծածկված էին պարսպորմերեն թափթփած քարերու փլատակներով և կղմինտրներու բազմակույտ բեկորներով»[28]։

Սահմանի վրա ընկած մնացած ամրությունների հետքերը հայտնաբերվել են Սատաղի մերձակայքում։ Դեռ առիթ կունենանք անդրադառնալու բուն քաղաքին. այժմ միայն նշենք, որ գլխավոր ամրոցից դեպի արմ. գտնվում է փոքր ֆորտը, որն զբաղեցնում է 40×60 յարդ, այսինքն 37×55 մ մակերես. ֆորտի կենտրոնում կա աղբյուր։ Սատաղի առաջին հետազոտողի՝ Ալֆրեդ Բի-

---

25 Տայք, Դրացիք և Խոտորջուր. Պատմա-տեղագրական ուսումնասիրություն. հ. Դ, գրեց Հ. Տաշյան. Վիեննա, 1981, էջ 53։

26 Հին Հայաստանի արևմտյան սահմանը. Փոքր-Հայք. եւ. Կողոփենե (Սեբաստիա), գրեց Հակոբոս Տաշյան. Վիեննա, 1948, էջ 351—352։

27 Н. Адонц. Указ. соч., с. 80.

28 Փր. և Եվգ. Կյումոն. նշվ. աշխ., էջ 348։

լիոտտիի կարծիքով, այն հնօրյա քաղաքի առաջակետն էր[29]։ Նմանատիպ մի այլ կառույցի հազիվ նշմարելի հետքերն առկա՝ են Սատաղի ամրոցի հակադիր՝ արևելյան կողմում, Բայբուրդ տանող ճանապարհի վրա[30]։

Կան այլ փոքր ամրություններ ևս, որոնք վերաբերում են Սատալա-Տրապեզունդ համակարգին։ Կյումոն եղբայրները Գալ գետի ափին, Սատաղից երկու ժամ հեռավորության վրա, տեսել են տասը մետրանոց աշտարակ ունեցող մի փոքր պահակակետի ավերակներ։ Պահակակետի ընդհանուր չափերն էին 11×6 մ[31]։ Այս վերջինն էլ, հավանաբար, գտնվում էր հին Դոմանայի մերձակայքում, որը լիմեսի կարևոր կետերից էր ու Սատաղից էլ հեռու 18 հռոմ. մղոնով (27 կմ)[32]։ Մեր պահակակետը կառուցվել է այժմյան Քյոսյո բնակավայրում, Սատաղից 20 կմ հեռավորության վրա։ Այդտեղից քիչ հյուսիս նույն գիտնականները հիշատակում են ևս երկու ամրություն, որոնցից մեկն աշտարակի ավերակներ են՝ հնագույն Սեդիսսա ամրոցի ենթադրվող տեղում (24 հռոմ. մղոն Դոմանայից հեռու)[33], իսկ մյուսը՝ երբեմնի Զիգաննայի ավերակները[34]։ Այս պահակակետերի ու փոքր ֆորտերի մասին շատ աղքատիկ են տեղեկությունները. նրանք ունեն ուղղանկյունաձև հատակագիծ, իսկ ծայրերում՝ բոլորաձև աշտարակներ։ Օրինաչափ կլիներ մեր տրամադրության տակ եղած այս հատուկենտ նյութը համեմատել Հայաստանի հարևան երկրներում, մասնավորապես Իրանում գտնված նյութի հետ։ Իրանի տարածքում պահպանված հին պահակակետերը՝ դատելով նրանց չափերից ու հատակագծից, վերինեփրատյան լիմեսի ամրությունների նման, փոքրաթիվ կայազորների համար նախատեսված ժամանակավոր կետեր են։ Արևմտյան Իրանում, քննվող նյութի տեսակետից, ուշադրության են արժանի երեք պաշտպանական ամրություններ։ Նրանցից առաջինը՝ Գաչ-Դարվազեհը, ուղղանկյունաձև հատակագծով սովորական դիտակետ է (15×17 մ)[35]։ Ինչպես նրա արտաքին արևելյան ու արևմտյան կողմերը, այնպես էլ ինտերիերը գրեթե երեք հավասար մասերի բաժանող և միմյանց զուգահեռ պատերն ունեն 122 սմ հաստություն։ Այս պահակակետում, մոտավոր հաշվումներով, կարող էին ամրանալ 15—20 մարդ։

Գաչ-Դարվազեհին հարևան մյուս երկու ամրոցները նշանակալից են թե՛ իրենց չափերով և թե՛ դիրքով։ Դրանք արտաքուստ բավականաչափ նման են վերինեփրատյան ամրություններին։ Երկուսն էլ գտնվում են Թանգ-ի-Մալիուն վայրում։ Առաջին ամրոցը 26 մ երկարություն ու 22,56 մ լայնություն ունեցող կառույց է։ Արտաքին պատերի լայնությունը 107 սմ է։ Ամրոցի մուտքի դեմ-դիմաց հյուսիսային կողմում շարքով կանգնած են յոթ նեղ ու երկար միանման ու միմյանց զուգահեռ սենյակներ, որոնք, հավանաբար, զինվորների կացարաններ են եղել (2,15×5,80 մ)[36]։ Բրիտանիայի[37], Մերձհռենոսյան ու Դանուբյան, ինչպես և Հռոմի սահմանային մյուս ճամբարների օրինակը[38] հուշում է, որ ամրոցների ներսում զինվորները տեղավորվում էին կողք-կողքի, միաշարք կառուցված 7, 10, 12 կամ 14 սենյակներում։ Սովորաբար, այդ սենյակներից

---

29 T. B. Mitford. Biliotti's Excavations at Sataia.—Anatolian Studies. 1974, vol. XXIV, p. 228.

30 Նույն տեղում, էջ 230։

31 Փր. և Եվգ. Կյումոն. Նշվ. աշխ., էջ 370—371։

32 Նույն տեղում, էջ 372։

33 Նույն տեղում, էջ 378—379։

34 Նույն տեղում, էջ 347։

35 M. A. Stein. Old routes of Western Iran. Narrative of an archaeological journey carried out and recorded by... London, 1940, fig. 8.

36 Նույն տեղում, նկ. 6։

37 Roman Britain in 1945. I. Sites Explored. II. Inscriptions (Plates X, XI).—The Journal of Roman Studies. Vol. XXXVI. 1946, p. 135, fig. 8; G. Webster. Op. cit., p. 208, fig. 44; I. A. Richmond. Roman Britain. Harmondsworth etc. London, 1955.

38 G. Webster. Op. cit., p. 212, fig. 48; p. 184, fig. 34; p. 185, fig. 35.

յուրաքանչյուրում, որոնք երբեմն կիսվում էին երկու մասի, ապրում էր ութ կաս ամեն մասում՝ չորսական մարդ։ Իսկ ութ թիվը համապատասխանում է հռոմեական բանակում ընդունված ամենափոքր ստորաբաժանմանը։ Հետևաբար, Թանդ-ի-Մալիունի առաջին ամրոցում տեղավորվել կարող էր մոտ 25—30 լեգեոնական, յուրաքանչյուր սենյակում՝ չորսական։ Նույն ամրոցի արևելյան պատի տակ, հս-արլ. անկյունային սենյակից 5 մ հեռու գտնվում էր ջրհորը։ Ամրոցը չուներ աշտարակներ, բայց դրա փոխարեն նրա շուրջը փորված էր 3.65 մ լայնությամբ խրամ։

Թանգ-Ի-Մալիունի երկրորդ ամրոցը առավել անխոցելի է[39]։ Դիտարկված շինությունների նման, այն ևս ուղղանկյունաձև է (29×23,50 մ մակերեսով)։ Այս ամրոցի հյուսիսային կողմում, մուտքի առաջ, ի տարբերություն հարևան ամրոցների, կա նաև մի փոքր բաստիոն։ Վերջինից էլ բացի այն ամրացված է նաև 10 կիսակլոր աշտարակներով, որոնցից չորսը՝ անկյուններում։ Ամրոցի ներսում կարող էր տեղավորվել մոտ 25 զինվոր, որոնք վտանգի դեպքում բարձրանում էին աշտարակների գլուխը՝ երկու զինվոր մի աշտարակի վրա։ Աշտարակները միմյանց միացնող պատերն ունեին 76 սմ հաստություն, և այդ պատճառով նրանց վրայով կարող էր անցուդարձ անել միայն մեկ զինվոր, որ պայմանավորված էր ամրոցի չափերով և աշտարակների թվով։ Հետևաբար՝ այս ամրոցը ևս հանդիսանում էր մի ինչ-որ խոշոր ամրոցի ժամանակավոր, օժանդակ արբանյակ։ Ամրոցի ներսում, դարպասին մոտիկ, որի լայնությունը 2,44 մ էր, գտնվում էր ջրհորը։ Այստեղ ևս, հարևան ամրոցների նման, դարպասի դեմ-դիմաց, տվյալ դեպքում՝ կենտրոնական շինության շուրջը համախմբված էին զանազան կառույցներ, իսկ դարպասի առաջ ազատ տարածություն էր ու ջրհոր[40]։

Դիտարկված երեք ամրոցների և, հատկապես, վերջինի հետ իրենց գրաված դիրքով և արտաքին չափերով կարելի է համեմատել Հայաստանի տարածքում կառուցված Հացավանի (Գառնիի ճանապարհին) և Միջագետքի Թել-Բանդարի ամրոցները։ Հյուսիսից դեպի հարավ ուղղված Հացավանի ամրոցը, բացառությամբ հյուսիսային կողմի, գործնականում լավ պաշտպանված էր տեղանքով։ Հյուսիսից ամրոցը պաշտպանում են երեք կիսակլոր աշտարակ. դրանցից արևմտյանի տրամագիծը 5,65×2 մ է, կենտրոնական աշտարակինը՝ 6×2, արևելյան աշտարակինը՝ 4,25×2։ Հյուսիսային պատի հաստությունը 3,2—3,9 մ է, արևելյան ու արևմտյան պատերն ամրացված են 6—7 կոնտրֆորսներով։ Նույն կոնֆիգուրացիան ունի նաև ձորի եզրին կառուցված հարավային պատը։ Ամրոցի ներսում, հյուսիսային կեսում նշմարվում են ավելի քան 10 սենյակների հիմքեր։ Դրանցից մեկի կլոր պատի տակ հայտնաբերվել են առաջին շինարարական հորիզոնի հետքերը, իմպլուվիումով հանդերձ։ Այս ջրավազանն ունի հետևյալ չափերը. 1,6×1,5 մ մակերես, 2,7 սմ բարձրությամբ և 22—30 սմ լայնությամբ տուֆե պատեր։ Ամրոցի կենտրոնում ընկած է կլոր շրջագծով մի բլրակ։ Արևելյան ու արևմտյան պատերի հաստությունը մոտ երկու մետր էր, որ նշանակում է, թե դրանց վրայով միաժամանակ կարող էին անցնել երեք զինվոր։ Պատերը շարված են միջին չափի գլաքարերով, որոնց ողորկ մասերն ուղղված են դեպի դրսի կողմը։ Անկյուններում քարերի երկարությունը հասնում է մինչև 1 մ։ Պատերն ամրացված են կրաշաղախով՝ ժայռոտ հիմքի վրա, իսկ տեղ-տեղ, ժայռի ու պատի միջև, հայտնաբերված է

---

[39] M. A. Stein. Op. cit., fig. 5.

[40] Ամրոցի արտաքին պատերից նայող 10 աշտարակները գտնվում էին միմյանցից հետևյալ հեռավորության վրա. հյուսիսային պատի երկու անկյունային աշտարակներից դեպի մոտակա հարավայինները 10 մ էր, այստեղից մինչև հաջորդ աշտարակները՝ 6,40 մ, իսկ այս վերջիններիցս մինչև երկու հարավային անկյունային աշտարակները՝ 7,90 մ։ Վերջիններից 5 մ դեպի արլ. և արմ. կանգնած էին ամրոցի վերջին երկու աշտարակները, որոնց միջև եղած հեռավորությունը 7,90 մ էր։



Հայ-հռոմեական (մ. թ. II—IV դդ.) և պարսկա-բյուզանդական (VI դ.) սահմաններ

(1) Notita Dignitatum*-ում բերված ամրոցները, (2)* Tabula Peutingeriana*-ում և* Antonin August*-ի քարտեզում բերված բնակավայրերը, (3) Հուստինիանոսի օրոք Բյուզանդիային պատկանող հայկական բնակավայրերն ու ամրոցները, (4) Սասանյանների գերիշխանության ներքո գտնվող բնակավայրերն ու ամրոցները, (5) ժամանակակից բնակավայրերը, (6) Առևտրական ու ռազմական ճանապարհները մ. թ. I—VI դդ., (7) Մեծ ու Փոքր Հայքի գետերը։*

խճի սուբստրուկցիա։ Ուշագրավ է, որ պատի մի հատված հյուսված է եղևնաձև շարվածքով[41]։

Հացավանի ամրոցի հորինվածքին, ինչպես մատնանշել է Գ. Ա. Տիրացյանը, ամենից ավելի նման է Թել-Բանդարի ամրոցը, որի ավերակները հայտնաբերվել են Քիշ քաղաքի ուշ պարթևական շերտում[42]։ Այս ամրոցից պահպանվել է միայն առջևի՝ հս-արմ. պատը, որ գրեթե նույնությամբ կրկնում է Հացավանի ամրոցի ձևերն ու չափերը, և երկուսն էլ թվագրվում են մոտ մ. թ. III դարով։

Դիտարկված ամրոցների շարքը, այսինքն՝ Իրանի տարածքում գտնվող երեք ամրոցները, վերինեփրատյան լիմեսի պահակակետերը, ինչպես նաև Հացավանի ու Թել-Բանդարի ամրոցներն ունեն ուշագրավ որոշ ընդհանրություններ. դրանք բոլորն էլ ուղղանկյունաձև կառույցներ են և պաշտպանվում են կիսակլոր, մասամբ նաև՝ անկյունային աշտարակներով։ Գրեթե բոլորի ներսում կա ջրամատակարարման հանգույց (աղբյուր, ջրհոր կամ ջրավազան)։ Բոլորն էլ հանդիսանում էին ավելի մեծ շինությունների բաստիոններ և օգտագործվում կարճատև կռիվների ժամանակ։ Այս ընդհանրություններից բացի հիշյալ ամրոցներն ունեն նաև տարբերություններ, որոնք հիմնականում կապված են շինանյութի (քար, աղյուս) ու պարիսպների մանրամասների հետ. վերջիններս կամ հարթ պատեր են, կամ ընդհատվում են կիսակլոր աշտարակներով, կամ էլ բեկվում՝ կոնտրֆորսներով։ Վերջիններն այն տարրերն են, որոնք վկայում են լիմեսի այս ամրությունների սինկրետիկ բնույթի մասին։ Հետաքրքիր է, որ դրանք ի հայտ են գալիս բավական մեծ տարածքի վրա՝ Ասորիքում, Միջագետքում, Հայաստանում և Իրանում, միաժամանակ լինելով այս օջախների և հունա-հռոմեական աշխարհի մշակութային առնչությունների արդյունք։ Վերջինների կարևոր տարրերն են ուղղանկյունու ձևը, ինտերիերի բաղադրամասերի որոշակի տեղաբաշխումը, իսկ առաջիններինը՝ կիսակլոր աշտարակները, կոնտրֆորսները։ Բոլորովին վերջերս, Հացավանի տիպի մի ամրոցի հետքեր էլ գտնվել են Թուրքմենստանում, Ամուդարիայի ափին։ Այնտեղ ևս սենյակները ներսից կից են երեք կիսակլոր աշտարակներ ունեցող պատին[43]։ Այս ևս վկայում է, որ անտիկ դարաշրջանում ամրոցաշինության սինկրետիկ տիպերն ունեին տարածման լայն աշխարհագրություն (II—IV դդ.)։

Լիմեսի կապակցությամբ դիտված այս առաջին կարգի փոքր ամրությունների կողքին կային նաև խոշոր ամրոցներ՝ նախատեսված երկարատև պաշտպանության համար։ Այս առումով լուրջ ուշադրության է արժանի Եփրատի աջ ափին ընկած Քիլիսի-Յազիզի կամ Քիլիսի-Դյուղյու ամրոցը, որ հայտնաբերվել ու նկարագրվել է միայն վերջերս՝ 1969—1970 թթ.[44]։ Սա իր ճարտարապետությամբ հետաքրքիր կառույց է, նշանակալի չափով աղերսվելով հայկական մյուս խոշոր անտիկ ամրոցի՝ Գառնիի հետ[45]։ Երկու ամրոցներն էլ, ըստ երևույթին, կառուցված էին հռոմեացիների ներխուժումից առաջ։ Երկուսն էլ տեղադրված են բարձունքի վրա և հաջող կերպով հարմարեցված տեղանքին։

---

41 Տե՛ս Գ. Ա. Տիրացյան. Հացավան ամրոցի պեղումները. 1961 թ.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 11, էջ 79—84։ Նույնի՝ Հացավան ամրոցի պեղումները. 1962 թ.—նույն տեղում, 1963, № 12, էջ 103—110։

42 Գ. Ա. Տիրացյան. Հացավան ամրոցի պեղումները. 1962 թ.։ Տե՛ս նաև Г. А. Кошеленко. Культура Парфии. М., 1966.

43 Г. Г. Гутлыев, А. А. Бурханов. Раскопки городища Ходжа-Идаткала.—В кн.: Археологические открытия 1981 г. М., 1983, с. 472—473; А. А. Бурханов. Новые исследования на средней Амударье.—Тезисы докладов науч. конф. молодых ученых. Ашхабад, 1982, с. 44—46.

44 U. Serdaroglu. Agin and Kalaycik Excavations, 1969. Ankara. 1971, p. 24—30.

45 Б. Н. Аракелян. Гарни I. Результаты работ 1949—1950 гг.—Археологические раскопки в Армении. № 3, Ереван, 1951, с. 27—37.

Ի տարբերություն հռոմեական դասական ուղղանկյունաձև ամրությունների, Գաոնիում և Քիլիսի-Յազիզիում (ուղղանկյունաձև) աշտարակները տեղադրված են պարիսպների ավելի խոցելի տեղերում՝ այն հատվածներում, ուր պատի ուղղությունը փոխվում է։ Ընդ որում՝ առավել պատասխանատու հատվածներում աշտարակների խտությունն ավելի մեծ է։ Ուշագրավ է Քիլիսի-Յազիզի ամրոցի հյուսիս-արևելյան հատվածը, ուր, տեղանքի թելադրանքով, պատերը կազմում են կիսաշրջան, որ հեշտ է բացատրել։ Նախ՝ հիմնահողն այստեղ, հենց պարսպի արտաքին կողմի ներքին շարքի տակ, կտրուկ իջնում է ցած, իսկ պարսպի շրջանաձևությունն էլ, իր հերթին, ապահովում է այս տեղամասում բոլոր կետերի վրա հավասարաչափ ճնշում։ Ուշագրավն այն է, որ կիսակլոր աշտարակի գաղափարն իրականացված է կիսակլոր պատի միջոցով։ Երկու ամրոցներն էլ կառուցված են գրեթե միաժամանակ՝ մ. թ. ա. I—մ. թ. I դդ.։

Շատ կարևոր է գտնել այս երկու ամրոցների նմանակները։ Հռոմեական Արևելքի ամրոցաշինության ամենացայտուն օրինակները պահպանվել են Ասորիքում, որտեղի հուշարձանները որոշակիորեն տարբերվում են համեմատաբար պահպանողական աֆրիկյան գոտուց, թեպետև նորարարությունները խորթ չեն նաև Աֆրիկային։ Այստեղի ամրոցների ու ֆորտերի ճնշող մասը կրկնում է ուղղանկյունաձև, հիմնականում՝ քառակուսի, հռոմեական ճամբարների ձևը, ընդ որում շատ տիպական են ուղղանկյուն աշտարակները։ Սակայն հռոմեական Աֆրիկայում, թեև շատ հաղվագյուտ, կարելի է հանդիպել միևնույն ամրոցի վրա ուղղանկյունաձև ու կիսակլոր աշտարակների զուգորդման օրինակներ[46], ինչպես և կիսակլոր աշտարակներով ուղղանկյունաձև ամրոցներ[47]։ Հռոմեական ամրոցաշինական ավանդույթների ուժը, աֆրիկյան միջավայրի յուրահատկությունները, ինչպես և հարևան մարզերի հետ շփումների համեմատաբար փոքր ինտենսիվությունը դանդաղեցնում էին նոր տիպի ամրոցների զարգացման պրոցեսը։ Ասորիքը, ընդհակառակը, ուներ ամրոցաշինական արվեստի հնագույն ավանդներ և այս խաչմերուկում, հռոմեական ժամանակներում ևս բախվում էր տարբեր մշակույթների հետ։ Ահա թե ինչու մենք այստեղ հանդիպում ենք ամրոցաշինական ձևերի մեծ բազմազանության։ Հյուսիսային Ասորիքում, Հայաստանից անմիջապես հարավ, ի հայտ են բերված ամրոցաշինական ձևերի բազում երանգներ։ Դրանցից են՝ քառակուսի աշտարակներ ունեցող Գուզե-լ-Հարաբ ամրոցը[48], եռանկյունաձև հատակագծով Հալաբիյյախը՝ ուղղանկյուն աշտարակների թանձր շարքով[49], Ամսարէգդի համալիրը, որն իրենից ներկայացնում է հռոմեական դասական քառակուսի ճամբարի շուրջ խմբված շինությունների զանգված[50]։ Հենց այստեղ, Քալկիսի լիմեսում, որը Հայաստանի սահմանագլխի երբեմնի լիմեսի հարավային հարեվանն էր, գտնվում է նաև Թել-Դրեհեմ ամրոցը։ Այս գրեթե շրջանաձև ամրոցի հոծ պարիսպները ամրացված են 11 գրեթե քառակուսի աշտարակներով, որոնք դրսից պաշտպանված են երկար կոնտրֆորսներով ամրացված երկրորդ պատնեշով։ Կրկնակի պատնեշի ներսում ձգվում է ևս մի պարիսպ՝ կանոնավոր սեղանի ձևով, որի արևմտյան մասում տեղադրված է երկու քառակուսի աշտարակներով կողակցված դարպասը։ Սրանից ներս, դատելով խաչաձև

---

[46] D. Meredith. The Roman Remains in the Eastern Desert.--The Journal of the Egyptian Archaeology. Vol 38, London, 1952, fig. 3.

[47] D. Meredith. Op. cit., p. 97, fig. 2.

[48] R. Mouterde et A. Poidebard. Le Limes de Chalcis. T. 36 (2) Atlas. Paris, 1945, pl. 73.

[49] Fr. Sarre und E. Herzfeld. Archäologische Reise im Euphrat—und Tigris—Gebiet. Mit einem Beitrage: Arabische Inschriften von M. van Berchum. In drei Bänden.—Forschungen zur Islamischen Kunst. Hrsg. von F. Sarre. I. Bd. 3. (Tafelband). Berlin, 1911.

[50] R. Mouterde et A. Poidebard. Le Limes de Chalcis, pl. XLVIII.

հատակագծից, կառուցված է եղել ինչ-որ մի կարևոր շինություն[51]։ Թել-Դրեհեմի ամրոցը սերտ աղերսներ ունի հայկական Գառնի և Քիլիսի-Յազիջի ամրոցների հետ։

Պատահական չէ, որ Հայաստանը և հարակից խոշոր երկրները հենց այն պարարտ հողն էին, որից ծնվեցին Գառնին ու Քիլիսի-Յազիջին։ Բուն Հայաստանը, Ասորիքի նման, հնագույն ու ինքնատիպ մշակույթով. մասնավորապես, ամրոցաշինական ավանդներով հարուստ երկրամաս էր։ Ուրարտական ժամանակաշրջանի ամրոցների հետ կատարված թեկուզ մակերեսային համեմատությունը ապշեցնում է ի հայտ եկած ամրոցաշինության ձևերի բազմազանությամբ։ Որոշ ամրոցներում մենք պարզորոշ տեսնում ենք վաղ հայկական և ավելի ուշ շրջանի ամրոցների ձևերը. միմյանցից հավասարաչափ հեռացված աշտարակներ, կլոր, օվալաձև, սեղանաձև հատակագծով ամրոցներ, ինչպիսիք են Դտնալուն, Կալեհ-Սիահը և Բաստամը[52]։ Երբեմն ապշեցնում է նրանց նմանությունը ավելի ուշ կառուցված հռոմեական ամրոցների հետ. օրինակ՝ հանդիպում են խիստ կանոնավոր, ուղղանկյունաձև հատակագծով և քառակուսի աշտարակներով ամրացված ամրոցներ[53]։ Ինչպես երևում է, վաղ հայկական շրջանում շարունակում էին կառուցվել և՛ ուրարտական տիպի հզոր ամրոցներ, և՛ ձևավորվում էին նոր տիպի բերդեր, որոնք ներառնում էին իրենց մեջ ուրարտական ու հելլենիստական շրջաններում Հայաստանում հանդիպող ամրոցների գծերը[54]։

Առաջավորասիական գոտուն է վերաբերում վերինեփրատյան լիմեսի ևս մի ամրոց՝ Պաղնիք-Յորենին. Քիլիսի-Յազիջիի և Կալաչիքլերի հարևանությամբ։ Այն Եփրատի աջ ափին է ընկած, Կալայչիկ ամրոցի դեմ-դիմաց[55]։ Թեև այս ամրոցը վերջնականապես ձևավորվել է III դարում, սակայն տեղում առկա են նաև ավելի վաղ շերտեր։ Այդ է, մասնավորապես, վկայում ամրոցի 7-րդ աշտարակի շարվածքում դրված լատինական արձանագրությունը[56]։ Պահպանված է շինարարական արձանագրության ձախ կեսը, որի մեջ հիշվում է Գալաթիա-Կապադովկիայի կառավարիչ Ս. Կեսսենիոսի անունը (80—82 թթ. մ. թ.)։ Վաղ շերտի մասին է վկայում նաև այստեղ գտնված և Ռ. Հարփերի կողմից հիշատակվող, մ. թ. I—II դդ. վերաբերող դրամների գանձը[57]։ Եփրատի ափին գտնվող Պաղնիք-Յորենի ամրոցի ձևերը խիստ ուշագրավ են. նրա հր-արմ. և հր-արլ. պատերը կազմում են ուղիղ անկյուն։ Սակայն տեղանքի առանձնահատկությունները հարկադրել են շինարարներին փոխելու մյուս պատերի կոնֆիգուրացիան։ Մասնավորապես, հյուսիսային պատն ունի աղեղի ձև։ Ամրոցն ամրացված է 11 կիսակլոր աշտարակներով և ունի չորս դարպաս, որոնցից երկուսը բացվում են գետի կողմը, մեկը՝ դեպի հս-արլ., իսկ մյուսը՝ արմ.։ Ելնելով որոշ առանձնահատկություններից՝ Պաղնիք-Յորենին Հացավանի ու Թել-Բանդարի տիպի ամրոցների տարատեսակներից մեկն է։ Ավելորդ չենք համարում հր-արմ. պատի երեք կիսակլոր աշտարակները համեմատել Հացավանի ու Թել-Բանդարի հյուսիսային ճակատների հետ։ Հենց

---

51 Նույն տեղում, աղ. XCIV:

52 H.—J. Kellner. Urartu. Ein wiederentdeckter Rival Assyriens. (Prähistorische staatssammlung München).—Ausstellungskatalog der Prahistorischen Staatssammlung. Bd. 2. München, 1976.

53 H.—J. Kellner. Op. cit., Ab. 7, 9, 12, 35.

54 С. А. Есаян. Древняя культура племен Северо-Восточной Армении (III—I тыс. до н. э.). Ереван, 1976.

55 R. P. Harper. Pagnik Öreni Excavations, 1970 (Plates 81—94).—Keban. № 3, Ankara, 1972, p. 123—125, pl. 81; Pagnik Oreni Excavations, 1971 (Plates 85—96).—Keban, № 4, Ankara, 1974, p. 107—108, pl. 85; Pagnik Oreni Roman Fort. 1971.—Anatolian Studies, 1972, vol. XXII, p. 27—28.

56 R. P. Harper. Pagnik Öreni Roman Fort, 1971, p. 27—29.

57 R. P. Harper. Op. cit., p. 27.

այդ երեք աշտարակներն էլ, որ 11-ից ամենախոշորն են, կրում են պաշտպանության հիմնական ծանրությունը։ Իսկ, մյուս կողմից, եթե համաչափորեն կրկնենք հր-արմ. և հր-արլ. պատերը, կստանանք Հացավանի ամրոցի պատճենը, այն տարբերությամբ միայն, որ Հացավանի կոնտրֆորսների փոխարեն պարսպի պատերն այստեղ ամրացված են կիսակլոր աշտարակներով, որոնք իրենց փոքր չափերի պատճառով ակնհայտորեն տարբերվում են վերոհիշյալ երեք աշտարակներից։ Իհարկե, սրանով չեն ավարտվում խնդրո առարկա ամրոցների ընդհանրությունները։ Ինչպես Հացավանի, այնպես էլ Պաղնիք-Յորենիի հենտրոնում մենք տեսնում ենք շրջանաձև թմբիկ, հավանաբար՝ հրամանատարական դիտակետը։ Ավելի հետաքրքիր է մեկ այլ մանրամասն։ Արդեն տեսանք, որ Հացավանի ամրոցի շարվածքում նկատվել է եղևնաձև շարվածքի առկայությունը, որ ավելի բնորոշ է արևմտյան ամրոցաշինությանը։ Պաղնիքի 4-րդ աշտարակից արևմուտք ընկած սենյակի պատի շարվածքը ննենք։ մենք ականատես ենք դառնում միևնույն եղևնաձև շարվածքի, որն առկա է նաև մեկ ուրիշ սենյակի հս-արլ. պատի շարվածքում (ըստ Ռ. Հարփերի՝ այդ սենյակը նախատեսված էր ձիեր պահելու համար)[58]։ Իսկ ո՞վ է կառուցել կամ, ավելի ճիշտ, վերակառուցել Պաղնիք-Յորենիի ամրոցը, որը, դատելով չափերից, կարող էր ծառայել կոհորտի համար։ Բացառված չէ, որ մ. թ. I դարում այստեղ շինարարական աշխատանք է ծավալել Ռետիչական 4-րդ հեծյալ կոհորտը, որի նստատեղը՝ Անալիբան, գտնվում էր Պաղնիք-Յորենիից 80 կմ հյուսիս (Աստիճանաց գիրք, 38-րդ, 28)[59]։

Վերինեփրատյան լիմեսի հակադիր ծայրերին գտնվում էին հռոմեացիների ռազմական ուժերի ամենախոշոր միավորումները, որոնք տեղավորված էին Սատաղում և Մելիտենայի ամրոցներում։ Ի տարբերություն արդեն քննարկված փոքր ու միջին չափի նմանօրինակ կառույցների, վերջիններս ավելի արմատական ձևով էին ենթարկվում հռոմեական ամրոցաշինության սկզբունքներին. կառուցված են համեմատաբար հարթ տեղանքում՝ խստիվ պահպանելով հռոմեական ճամբարների քառանկյուն սկզբունքը։

Մելիտենայի մասին հույժ կարևոր տվյալներ են պահպանված Պրոկոպիոս Կեսարացու մոտ. «Հնում,—գրում է նա,—Փոքր Հայք կոչված (երկրում), Եփրատ գետից ոչ հեռու, գտնվում էր մի վայր, ուր հաստատվել էր հռոմեական զորագունդը։ Վայրը կոչվում էր Մելիտենե, իսկ զորագունդը՝ լեգեոն։ Հռոմեացիները հնում այստեղ ցածրադիր վայրում կառուցել էին քառակուսի ամրություն, որը զինվորների համար բավականաչափ զորանոցներ ուներ... Այնուհետև՝ հռոմեացիների կայսր Տրայանոսի որոշմամբ վայրը ստացավ քաղաքի իրավունք և դարձավ շրջանի մայրաքաղաք։ Ժամանակի ընթացքում Մելիտենն քաղաքը մեծացավ և մարդաշատ դարձավ, և երբ ամրություններից ներս այլևս տեղ չմնաց բնակվելու (...տարածությունը շատ փոքր էր), հաստատվեցին քաղաքի շրջակայքում, ուր և եկեղեցիներ, վարչական շենքեր, հրապարակ, խանութներ կառուցեցին, (նաև) սյունաշարքեր, բաղնիքներ, թատրոններ, [անցկացրին] քաղաքային փողոցներ և ինչ որ անհրաժեշտ է մի մեծ քաղաք զարդարելու համար։ Բայց դրա հետևանքով Մելիտենեի մեծ մասը քաղաքի սահմաններից դուրս եկավ»[60]։

---

[58] R. P. Harper. Pagnik Öreni Excavations, 1971.—Keban, № 4, Ankara, 1974, p. 107—108, pl. 88(1—2).

[59] Պաղնիք-Յորենի ամրոցի մի նմանակ էլ բացված է Ռումինիայում՝ Դոբրուջայի մարզում, Դինոգետի-Գարվան վայրում. այն թվագրվում է IV—VI դդ. և վկայում է այս տիպի ամրոցների լայն աշխարհագրության մասին. տե՛ս A. Rădulescu, I. Bitoleanu. Istoria romanilor dintre Dunăre şi Mare Dobrogea. Bucureşti, 1979, p. 101, f. II.

[60] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Բյուզանդական աղբյուրներ, Ա. Պրոկոպիոս Կեսարացի. Կառուցումների մասին. գիրք 3, գլուխ 4։ Թարգմանություն ընագրից առաջաբանով ու ծանոթություններով Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 195։

Պրոկոպիոսի վկայության շնորհիվ էլ մենք կարող ենք գաղափար կազմել քաղաքային կյանքի մակարդակի և այդ քաղաքում հունա-հռոմեական մշակույթի շատ տարրերի արմատավորման մասին։ Հին Մելիտենեի տեղում (ժամանակակից Էսքի-Մալաթիա բնակավայրի տարածքում), ցավոք, գեռևս հնագիտական ուսումնասիրություններ չեն կատարվել, և այդ առումով Մելիտենեն մեզ համար սպիտակ կետ է։ Միակ հուսադրող բանը Թ. Բ. Միթֆորդի հետախուզումներն են։ 1965 թ. Մելիտենեից 50 կմ դեպի հարավ, Կյահտաչայի ակունքների մոտ, նա հայտնաբերել է դեպի Սամոսատա ձգվող հսկայական ակվեդուկի ավերակներ, իսկ Կյահտաչայի գետաբերանի մոտ՝ փոքր ակվեդուկի հետքեր[61]։

Բոլորովին այլ է Սատալայի վիճակը, որը վերինեփրատյան լիմեսի հյուսիսային մասում կենտրոնացված զինված ուժերի ամենախոշոր ճամբարն էր։ Եթե նրա մասին եղած գրավոր աղբյուրները (իհարկե, մեր թեմայի տեսանկյունից) խիստ աղքատ են, ապա ի տարբերություն Մելիտենեի, այնտեղ որոշ չափով պեղումներ են կատարվել։ 1874 թ. ինը օրվա ընթացքում հնագիտական մակերեսային ուսումնասիրություններ է կատարել Տրապիզոնի բրիտանական փոխհյուպատոս Ալֆրեդ Բիլիոտտին, որից և ստանում ենք ամրոցի քաղաքային կյանքի ու ճարտարապետության վերաբերյալ հիմնական տեղեկությունները։ Ավելին, նրա հաշվետվության մեջ հաճախ կան այնպիսի մանրամասներ, որոնք բացակայում են հետագա ուսումնասիրողների անդրադարձումներում։ Այնուամենայնիվ, Սատաղում որոշ նոր նյութեր հայտնաբերված են նաև Բիլիոտտիից հետո[62]։

Սատաղի կամ Սատալայի ամրոցը գտնվում էր բլրոտ տեղանքում, ռազմագիտական առումով կարևոր վայրում, իշխելով Մեծ Հայքի հյուսիսային շրջաններից դեպի Փոքր Հայք և Սև ծով գնացող ուղիների վրա։ Սատալան ընդամենը 90 մ էր բարձր Գայլ գետի ակունքների մակարդակից։ Նրա գրեթե քառակուսի պատերը (360×362 մ) ամրացված էին չորս ուղղանկյունաձև անկյունային աշտարակներով, որոնք պատի հարթության նկատմամբ գտնվում էին 135 աստիճանի անկյան տակ։ Ամրոցի բոլոր չորս պարիսպներն էլ ամրացված էին նույնանման ուղղանկյուն աշտարակներով, որոնք, դատելով մեզ հասած մնացորդներից, իրարից գտնվում էին հավասար հեռավորության վրա[63]։ Ամրոցի հս. և արլ. պարիսպների միջև Բիլիոտտին հայտնաբերել է դարպասներ, որոնք կողակցված էին երկուական աշտարակներով։ Առ այսօր պահպանված միակ ամբողջական շինությունը հիպոկաուստ ունեցող բաղնիքն է, որը վերածված է թոնրատան։ Ամրոցի հր-արմ. հատվածն այժմ զբաղեցված է գյուղական խրճիթներով, արլ. դարպասից սկիզբ է առնում Բայբուրդ տանող ճանապարհը, որը հս. դարպասից հասնելով դեպի հռոմեական գերեզմանոցը՝ այնուհետև ձգվում էր դեպի Գայլ գետը։ Ինչպես արդեն վերը հիշեցինք, ամրոցից արլ. և արմ. կար մեկական ֆորտ։ Արևելյան ֆորտի հիմքերը պահպանվել են մինչև այսօր՝ ուղղանկյուն լավ հղկված քարերի ձևով։ Ամրոցի հր-արլ. եզրից մոտ 500 մ հեռավորության վրա որոշ հեղինակներ նշմարել են ակվեդուկի հետքեր, որը քաղաքը մատակարարում էր ջրով։ Կյումոն եղբայրներն ու Բիլիոտտին մատնացույց են անում ակվեդուկի չորս կամարներ, սակայն նրանցից առաջ՝ 1866 թ. Թեյլորը տեսել էր ակվեդուկի յոթ կամար, վկայելով միաժամանակ, որ յուրաքանչյուր կամարի բացվածքը 11 ֆուտ (3,35 մ) լայնություն ուներ։ Հետագայում այս շինության սրբատաշ քարերն օգտագործվել են հարևան Երզնկա քաղաքի մի շարք կառավարական

---

[61] T. B. Mitford. Survey of the Euphrates Limes.—Anatolian Studies. 1967, vol. XVII, p. 13.

[62] T. B. Mitford. Biliotti's Excavations at Satala.—Anatolian Studies. 1974, vol. XXIV, p. 221—244; *Փ. և Եվդ. Կյումոն, նշվ. աշխ., էջ 359—369,*

[63] T. B. Mitford. Op. cit., fig. 7, 9.

շենքերի համար[64]։ Հասարակական շինությունների հարուստ մանրամասների, արձանագրությունների, արվեստի գործերի հայտնաբերման շնորհիվ այսօր արդեն մեր առջև նորովի բացվում է ոչ միայն հռոմեական զորքերի նշանավոր հանգրվանի, այլև մեծ բնակավայրի քաղաքային աշխույժ կյանքը։

Հռոմեական խոշոր զորակայանների ճարտարապետական հորինվածքի որոշ յուրահատկությունների բացահայտման առումով որոշակի նպաստներ է բերում Հին Վաղարշապատը, որն, ի դեպ, կարիք ունի համակողմանի ուսումնասիրության։ 163 թ. խոշոր ապստամբության ճնշումից հետո, հռոմեացիները Վաղարշապատը հռչակեցին Հայաստանի մայրաքաղաք՝ վերանվանելով Կայնեպոլիս-Նոր քաղաք։ Վերջինն, ինչպես և Փոքր Հայքի մայրաքաղաքները՝ Մելիտենան ու Սատալան, հավանաբար, իրենից ներկայացնում էր քառանկյուն ամրոց՝ կառուցված Վաղարշապատ-Վարդգեսավան հին բնակավայրի տեղում, որի մասին վկայում են հայ միջնադարյան աղբյուրները։

Անկասկած, Վաղարշապատի տեղում, հռոմեացիներից շատ առաջ կային որոշ շինություններ, մասնավորապես, հեթանոսական տաճարը, իսկ վերջինիս հարևանությամբ՝ արքայական պալատը (Ագաթանգեղոս, 279, 384)։ Ամենայն հավանականությամբ ապստամբությունը ճնշելու օրերին էլ այստեղ հիմնադրվում է հռոմեական ճամբար։ Ավելի ուշ, Հայաստանի նոր մայրաքաղաքում ծավալվում են մեծածավալ շինարարական աշխատանքներ, որոնց ապացույցը այստեղ գտնված և 175 ու 185 թթ. վերաբերող լատինական երկու արձանագրություններն են[65]։ Ենթադրում են, թե իբր քաղաքը շրջափակված էր կլոր պարսպով, սակայն մի շարք հանգամանքներ հակասում են դրան և հուշում, որ Կայնեպոլիսն իր հատակագծով քիչ էր տարբերվում Մելիտենայից ու Սատալայից։ Նախ՝ հռոմեական ճամբարը (սկզբներում) միայն «Հայաստանի մայրաքաղաք» էր կոչվում սոսկ պաշտոնապես և, ինչպես երևում է հիշյալ արձանագրություններից, կառուցվել է 15-րդ լեգեոնի միավորումների կողմից, որոնց բուն կայանը Սատալան էր՝ կառուցված վերջիններիս կողմից քառանկյունաձև հատակագծով, որը հարցի ճիշտ լուսաբանման համար էական հանգամանք է։ Եվ ապա, ըստ Ագաթանգեղոսի՝ Գայանե կույսը մահապատժի էր ենթարկվել քաղաքի հարավային դարպասների մոտ (Ագաթանգեղոս, 302, 311)։ Այս վայրում ժամանակ անց կառուցված վկայարանի տեղում այժմ կանգնած է Գայանեի տաճարը։ Կայնեպոլիսի ենթադրվող կենտրոնից՝ այսօրվա Մայր տաճարից մինչև Գայանեի տաճարը մոտ 610 քայլ է, որը հավասար է կենտրոնից մինչև հր. դարպասը եղած հեռավորությանը։ Պարզվում է, որ կենտրոնից գրեթե նույն հեռավորության վրա, բայց հակադիր ուղղությամբ (580 քայլ) գտնվում է սուրբ Մարիանեի եկեղեցին, իսկ վերջինս կառուցված է քաղաքի հյուսիսային կողմում՝ Գայանե-Մայր տաճար առանցքի վրա։ Հավանաբար, այստեղ ու նրա հիմքերում էլ պետք է փնտրել քաղաքի հյուսիսային պարիսպների հետքերը։ Պարզվում է այնուհետև, որ քաղաքի հարավային ծայրից մինչև ենթադրվող հյուսիսային պարիսպը մոտ 380 մ է, որը շատ քիչ է շեղվում Սատալայի ամրոցի չափերից։

Կայնեպոլիսում, ինչպես Սատալայում, հայտնաբերված է անտիկ բաղնիք։ Ընդ որում, ինչպես պարզվել է, այն ունեցել է երկու բաժանմունք[66], որը նույնպես հիշեցնում է Սատալայինը։ Ավելի ստույգ պատասխաններ կարող էր տալ Սատալայի և Վաղարշապատի նեկրոպոլների ուսումնասիրությունը, սակայն, ցավոք, Սատալայի նեկրոպոլի նյութերը մեզ դեռ հայտնի չեն։

---

64 Նույն տեղում, նկ. 4։

65 М. И. Ростовцев. Новые латинские надписи с юга России с 1 табл. и 3 снимками. 1. Надпись из Эчмиадзина.—В кн.: Известия императорской археологической комиссии, вып. 33-й. С.-Петербург, 1909, с. 3; К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.—IV в. н. э.). М.—Л., 1953, с. 262—270).

66 Г. А. Тирацян. К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата.—Историко-филологический журнал, 1977, № 2, с. 85—88.

Այս ամենից բխում է մի եզրակացություն. ի տարբերություն վերինեփրատյան լիմեսի խոշոր ամրոցների ու փոքր չափերի պաշտպանական ամրությունների, որոնք երբեմն հռոմեացիների կողմից վերակառուցված ամրոցներ էին, հռոմեական լեգեոնների կայանները կառուցվում էին հարթ տեղանքում, քառանկյունու ձևով։ Աշխարհագրական հաջող դիրքի շնորհիվ նրանք աստիճանաբար վերածվում էին ընդարձակ բնակավայրերի՝ դառնալով տեղական բնակչության հետ տնտեսական ու մշակութային փոխհարաբերությունների նշանակալից կետեր։ Այս քաղաք-ճամբարների բնակչության մեծ մասը հռոմեական բանակի վետերաններ էին, և նրանց վրա դրված էին ռազմական ու տնտեսական բնույթի պարտականություններ՝ նվաճված երկրամասում հռոմեական կարգերը, օրենքները ու մշակույթը տարածելու համար։

Դեպի վերինեփրատյան լիմես ձգվող ճանապարհները հռոմեական բանակները արագորեն Արևելք առաքելու կարևորագույն անցուղիներ էին և կայսրների մշտական հոգատարության առարկան։ Նշանակալից էր Սատալա-Տրապեզունդ ճանապարհը, որը կառուցված էր դեռևս Դոմիցիանոսի օրոք։ Նրա նշանակությունը հատկապես աճեց այն բանից հետո, երբ նույն կայսրը Տրապիզոնում կառուցել տվեց նավահանգիստ[67]։ Բայց Արևելքում ամենից ավելի ուշադրություն էր նվիրվում Սեբաստիայից ու Նիկոպոլիսից Սատալա գնացող ճանապարհին։ Այդ է հաստատում թեկուզ այն հանգամանքը, որ Ներվայից մինչև Կոստանդին Մեծի օրերը ճանապարհը վերանորոգվել է ինը անգամ[68]։

Հայտնի են հռոմեական մի շարք զորամիավորումներ, որոնք տեղաբաշխված էին լիմեսի առանձին կետերում։ Դրա խոսուն ապացույցը IV դարի վերջերին կամ V -ի սկզբներին կազմված այն փաստաթուղթն է, որ ընդունված է համառոտ ձևով կոչել Աստիճանաց գիրք (Notita dignitatum et administrationum omnium tam civilium quam militarium in partibus Orientis et Occidentis), որն, ինչպես մի առիթով նկատել է Ն. Ադոնցը, արտացոլում էր շատ ավելի վաղ ժամանակների իրավիճակը[69]։ Հռոմեական կայսրության պետական ու զինվորական պաշտոնների ու կոչումների այս մանրամասն ցուցակից տեղեկանում ենք, որ Պոնտական դիոցեզի 11 պրովինցիաներից միայն Հայաստանն էր, որ ուներ իր դուքսը։ Նրա տրամադրության տակ էր դրված 3 լեգեոն, 11 ալա, 10 կոհորտ և 2 հեծյալ-նետաձգային գունդ։ Սրանցից Փոքր Հայքում կենտրոնացած էին՝ 2 լեգեոն, 4 կոհորտ, 6 ալա և եղած 2 հեծյալ-նետաձգային գնդերը, իսկ մնացած բոլոր ուժերը տեղաբաշխված էին Սատալա-Մելիտենա գծից հյուսիս և հարավ։ Մենք արդեն ասել ենք, որ լիմեսում հանգրվանած երկու լեգեոններն էին 12- և 15-րդը, որոնք Կորբուլոնի ժամանակներից տեղավորված էին Սատալայում ու Մելիտենայում։ Դոմանայում էր գտնվում դեպի լիմես նետված 2 հեծյալ-նետաձգային գնդերից մեկը։ Երկրորդ գունդը կանգնած էր արդեն մի քանի անգամ հիշատակված Սաբուսում՝ Մելիտենայից մոտ 100 կմ դեպի հյուսիս։ Չորս կոհորտներից մեկը կանգնած էր Անալիբայում՝ Կարսատ տանող լեռնային ճանապարհի հարավային եզրին, երկրորդը՝ Արավրակոսում, Կարսատից դեպի արևելք, երրորդը՝ Սիսիլայում, Սատալայից 12 մղոն դեպի արևմուտք և չորրորդը՝ Մետիտայում, Մելիտենայի շրջակայքում։ Վեց ալաները տեղաբաշխված էին Տաբլարիենսիսում (?), Ադ Պրետորիումում (Մելիտենայից հս-արմ.) և անտիկ ուղեցույցներից մեզ արդեն ծանոթ չորս կետերում՝ Կիակայում, Դասկուդայում, Աելիանա-Արանգեսում և Սուիսսայում (Սատալայից 26 հռոմ. մղոն դեպի հր-արմ.)։

---

67 Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XII в. н. э.). Изд. II, переработанное и дополненное. Ереван, 1954, с. 105—106.

68 Ց. Դ. Կ. Անդերսոն. Հետազոտական ուղևորություն ի Պոնտոս.—Պոնտական ռոմանասիրություններ. մասն Ա, Վիեննա, 1919, էջ 106—107։

69 Н. Адонц. Указ. соч., с. 98.

Ուշագրավ է և այն հանգամանքը, որ Սատալայում, Մելիտենայում, Սաբուսում ու Դոմանայում գտնվող զորամիավորումների հրամանատարներին միասին նշանակում էր անձամբ կայսրը[70]։ Սա կրկին անգամ ընդգծում է լիմեսի հիշված կետերի հույժ կարևորությունը։

Այսպիսով՝ լինելով հռոմեական ճարտարապետության և ինժեներական արվեստի արգասիք, Հայաստանի սահմանին կանգնած վերինեփրատյան լիմեսը՝ նման հռոմեական մշակույթի ուրիշ այլ տարրերի, նշանակալից չափով օգտագործել էր տեղական ավանդները, իր հերթին այն հարստացնելով հայկական մշակույթին ոչ ընորոշ տարրերով, որոնց արդյունքները Հայաստանում նշմարվում են վաղ բյուզանդական ժամանակներում, Հուստինիանոսի լիմեսի ընդհանուր հորինվածքի և առանձին բաղադրամասերի մեջ, որոնց ուսումնասիրության խնդիրը դուրս է ներկա հոդվածի շրջանակներից։

Հռոմեական լիմեսը կանգնած էր հայկական սահմանի գիծաց գրեթե անհաղթահարելի շղթայով, Փոքր ու Մեծ Հայքի և նրանց հարեան երկրների տնտեսական ու մշակութային առնչությունների համար արամադրելով միայն յուրահատուկ միջանցքներ, որոնք օտար երկրում բռնության գործիք էին։ Այնուամենայնիվ, այս միջանցքներն ի վիճակի չէին դիմագրավել Հայաստանի տարբեր հատվածների միջև հնուց ի վեր ձևավորված կապերին և հակադարձ ճնշման հետևանքով հենց իրենք վերածվեցին խոշոր անտեսական ու մշակութային կենտրոնների։

РИМСКАЯ СИСТЕМА УКРЕПЛЕНИИ НА ГРАНИЦЕ МАЛОЙ И ВЕЛИКОЙ АРМЕНИИ

А. П. АКОПЯН

Резюме

С эпохи Августа внешняя политика Рима подверглась значительным изменениям. За административной и военной реформами Августа последовали и другие вытекающие из них общегосударственные мероприятия, осуществление которых падает на время правления последующих императорских династий. Одной из причин этих некоторых внутриполитических акций на Востоке была Армения. Исторические события ускорили темпы преобразования системы укреплений (limes) на границе Малой и Великой Армении. Переброшенные со времен Корбулона в Малую Армению два легиона—XII и XV пережили империю. Их стоянки—Мелитена (XII) и Сатала (XV)—были двумя конечными звеньями лимеса на Верхнем Евфрате. Как выясняется, промежуток между Саталой и Мелитеной был сильно укреплен цепью крепостей и фортов, тянувшихся вдоль течения Евфрата двумя почти параллельными цепями. Начало формирования этого лимеса падает на время правления Веспасиана, когда Армения была окружена гарнизонами. В лимесе крупные города и крепости сочетались с малыми фортами и сторожевыми постами. Второй тип укреплений представлен двумя крепостями на берегу Евфрата (Пагник-Йорени и Килиси-Язизи). Среди них находились также местные—армянские и понтийские укрепления. Эта система окаймлялась с севера и юга крепостями третьего типа (Саталой и Мелитеной), построенными на ровном месте по всем правилам римской фортификации, в виде правильного четырехугольника. Лимес стоял на армянской границе непроницаемой цепью, допуская лишь экономические и культурные контакты между берегами в специфических коридорах, получивших наряду со своей основной—военной—функцией экономическое значение и превратившихся в крупные экономические центры. Несмотря на сложившуюся политическую обстановку в Армении, римляне не решались обосновываться на левом берегу Евфрата вплоть до эпохи Юстиниана (лимес Юстиниана), на что указывает археологический и письменный материал, приведенный в статье.

70 Նույն տեղում, էջ 101։